

## ՈՂՁՈՅՆ ԶԵԶ...

Ողջոյն ծեզ լերանց կարմիր կատարներ,  
Որ երեկոյեան լրառվ ողողուած  
Հպարտ հայեացքով դէս անհուն եթեր  
Նայում էք ազատ վեհովթեամբ լեցուած։  
Ու ծեր փառահեղ գագաթին հպարտ  
Սողում են ամպերն, սլայթում է որոտ։  
Բայց դուք անսասան, անհոգ եւ հպարտ  
Նայում էք վերից շատերին վախկոտ։  
Նայում էք դէս ցած, ուր սուր եւ նիզակ  
Պատում, կտրում են սիրտ ու սլարանց,  
Իզուր քարոզներ սիրով ներշնչուած,  
Իզուր աղերսանք, արցունք ու հոգոց։  
Եւ ստրկովթեամբ քոլորը բռնուած՝  
Ոմնանք սողում են թոյլ եւ անարի,  
Ոմնանք էլ ոսկու փայլով շլացած  
Փառքի ու թագի դարձել են գերի։  
Ես էլ թուլացած հոգով ու մտքով  
Կասկածի, դափ ցանցից խոյս տուած  
Եկել եմ ծեզ մօտ անհուն կարօտով։  
Եկել եմ իսպառ մարդկանցից մերժուած։  
Եկել եմ սովորել ծեզնից քաջովթին,  
Կամքի, կորովի պողպատէ ոտուան,  
Որ հպարտ կրծքով, զգոյշ եւ արթուն  
Անցնեմ ուղիներս քաջ ու աննկուն։  
Ակ' սիրեցի շատ—սիրով երկնատուր,  
Սիրոյ բոցերին իմ հոգին կնդրուկ  
Տեղը թշնամանքն եղաւ տրիտուր,  
Մինն է սա, ասին, կրթերին ստրուկ։

Ու որոնց վրայ մեծ գուղարքանքով  
Սահեցաւ ծեռա, սիրտս բարախեց,  
Աւ որոնց համար աղի արցոնքով  
Հոգիս իւր կոկոն վարդերը կախեց,  
Նոքա սեւ, լաժան օծերի նման  
Կոկոն վարդերս գրկում թառեցան  
Մըտիս խորքերում բացուեց գերեզման  
Ողջ նուշ տենչերս յանկարծ թոշնեցան:  
Իսկ ես, ես այժմ ատել եմ ուզում  
Միջոյ տեղ միայն սեւ թոյն պատրաստել.  
Ուզում եմ մարդկանց թքել ու մրել  
Քեզպէս անսասան նայել եմ ուզում:  
Նայել, թէ ինչպէս նոքա—ծիծոներ,  
Սողում են զողում ցեխի, մըի մէջ,  
Կրծում են միմեանց ցերեկ ու զիշեր,  
Իզար նախատուա հայածում անվերջ:  
Ողջոյն ծեզ լերանց կարմիր կատարներ,  
Ուսուցէք եւ ինձ ծեզպէս անվեհեր  
Նայել միշտ հպարտ, նայել դէափ վեր.  
Անկախ ու անվախ, ինքս լոկ իմ տէք:

ԱՄՊՐԷ